Արձանագրություն N 3

ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Կոմունալ ծառայություն ՀՈԱԿ-ի կարիքների համար ԱՄ-ԱՀԿԾ-ՀՈԱԿ-ԳՀԱՇՁԲ-18/01 - ծածկագրով գնանշման հարցումով գնման ընթացակարգի բացման նիստի շարունակություն

Ք.Ապարան ***«18» Ապրիլի 2018թ.***

ժ 12:30

Մասնակցում էին՝

Գնահատող Հանձնաժողովի նախագահ՝ Սամսոն Շահինյան – Աշխղեկ-վարպետ

Հանձնաժողովի անդամներ՝

Սանամ Մեդոյան – Հավաքագրող-գանձապահ
Գարեգին Կոստանյան - Աղբահանության բանվոր

Գնումները համակարգող՝ Միեր Ամիրյան

Օրակարգ

1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եզրակացության մասին

1.1 Ընդունել ի գիտություն որ. «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի /այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում էր ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների և «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ: ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում եզրակացություն չի ներկայացվել: Հիմք ընդունելով Կարգի 44-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարել իրականությանը համապատասխանող:
1.2 Ընթացակարգի առաջին տեղ զբաղեցնող ճանաչված մասնակցի կողմից հրավերով սահմանված ժամկետում ներկայացվել են որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, ինչպես նաև գնման առարկաների իր կողմից առաջարկված տեխնիկական բնութագրերը, որոնք գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել են հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3 դեմ - 0:

2 . ԱՄ-ԱՀԿԾ-ՀՈԱԿ-ԳՀԱՇՁԲ-18/01 ծածկագրով ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցներ հայտարարելու մասին

2.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 1 կետով ընդունած որոշումը՝ «**ԱՄ-ԱՀԿԾ-ՀՈԱԿ-ԳՀԱՇՁԲ-18/01**» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարել՝ «Տեր-Հայրապետյան Շին» ՍՊԸ –ին:

2.2 Համաձայն ՀՀ Գնումների մասին օրենքի 10-րդ հոդվածի անգործության ժամկետ չի սահմանվում:

2.3 Հաստատել պայմանագիր կնքելու մասին որոշման տեքստը և ընտրված մասնակցին տրամադրել պայմանագրի նախագիծը:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 3, դեմ - 0:

3. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել պայմանագիր կնքելու օրվան հաջորդող աշխատանքային օրը, ժամը 13:00-ին, ք.Ապարան, Բաղրամյան 26 հասցեում:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝	_____	Սամսոն Շահինյան
հանձնաժողովի անդամներ՝	_____	Սանամ Մեդոյան
	_____	Գարեգին Կոստանյան
Գնումները համակարգող ՝	_____	Միեր Ամիրյան